ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է Առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ. ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ. ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների և նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակում/վերանայում, ինչպես նաև դրանց հաշվարկում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փորձարկման փուլի ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է առողջապահական տվյալների հավաքագրման և վերլուծության իրականացում, համապատասխան մասնագետի ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով՝ առողջապահական տվյալների վերլուծության իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության համապարփակ ապահովագրության ներդրմամբ պայմանավորված, հիմնական ծառայությունների փաթեթը նկարագրող փաստաթղթերի մշակման ընթացքում կլինիկական տվյալների՝ ախտորոշումների, դրանց սահմանումների և ծառայությունների հետ նույնականացման խորհրդատվություն, այդ թվում՝

1. Ապահովագրական հիմնական ծառայությունների փաթեթում ներառված ծառայությունների բաշխում՝ ըստ խմբերի:
2. Փաթեթի հաստատված կառուցվածքին համապատասխան ախտորոշումների՝ հիվանդությունների և վիճակների ու դրանց դեպքում տրամադրվող ծառայությունների ցանկերի համադրում բաց աղբյուրներում առկա

տեղեկատվության հետ, այդ թվում՝ ԱՆ կողմից հաստատված գործելակարգերի, կլինիկական ուղեցույցների հետ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ ամսական հաշվետվություններ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության համադրումների, դրանց մեկնաբանությունների ամփոփ տեղեկատվության պարբերական փոխանցում փորձագիտական խմբի համակարգողին:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետն, ըստ անհրաժեշտության, կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ անհրաժեշտության:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն առողջապահության բնագավառում:
- Ավելի քան 5 տարվա փորձ առողջապահական տվյալների կառավարման, բժշկական կամ այլ տեսակի տեղեկատվության համակարգման և վերահսկման փորձառություն:
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմինների հետ աշխատելու կամ բժշկական կազմակերպությունում աշխատելու փորձ:
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար:
- Հայերենի, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ՝ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների

նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և, ըստ անհրաժեշտության, ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: